Հավելված N21
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2020թ. սեպտեմբերի 2-ի N 540- Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1.Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 18-34.17-Ղ3-1):

1.2. Ենթակա և հաշվետու է
Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ
Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

1.4.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը
Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3, Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառներում օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը,
2. ապահովում է երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.
3. ապահովում է երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության զարգացման պետական ծրագրերի մշակման, միջազգային փորձի մոտարկման և տեղայնացման, մոնիթորինգի և գնահատման աշխատանքների իրականացումը.
4. ապահովում է երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության հայեցակարգերի, ռազմավարությունների նախագծեր մշակումն ու դրանց իրականացումը.
5. ապահովում է մասնակցությունը պետական ռազմավարական ծրագրերի մշակման և իրականացման կազմակերպման և մոնիթորինգի աշխատանքներին.
6. ապահովում է երիտասարդական, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների նկատմամբ մոնիթորինգի կազմակերպումը.
7. ապահովում է երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներին առնչվող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագծերի մշակումը.
8. ապահովում է օրենքով սահմանված կարգով մասնակցությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ինչպես նաև միջազգային

միջգերատեսչական պայմանագրերի մշակմանը, Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումը երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառներում.

9. ապահովում է մասնակցությունը երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառների միջպետական համագործակցության ծրագրերի մշակմանը և իրականացմանը.
10. ապահովում է միջազգային երիտասարդական համագործակցության զարգացման նպատակով օտարերկրյա պետություններում տեղի ունեցող միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդական խմբերի և անհատ երիտասարդների աջակցությունը.
11. ապահովում է երիտասարդների ներուժի իրացման և զարգացման համար արդյունավետ մեխանիզմների մշակումը և կիրառումը.
12. ապահովում է երիտասարդների մասնակցային գործընթացների խթանմանը, հոգևոր-մշակութային, ազգային ինքնության զարգացման, իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը.
13. ապահովում է հանրապետական, համահայկական և միջազգային միջոցառումների և ծրագրերի մշակումը և իրականացումը.
14. ապահովում է երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտների ջատագովության իրականացումը.
15. ապահովել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրման աշխատանքները:

Իրավունքները՝

- ուսումնասիրել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներին առնչվող օրենսդրական դաշտը, կազմակերպել քննարկումներ շահագրգիռ կազմակերպությունների և անձանց հետ, հանդես գալ երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտների զարգացման և կարգավորման համար անհրաժեշտ իրավական ակտեր մշակելու, իրավական ակտերում փոփոխություններ, լրացումներ կատարելու առաջարկությամբ.
- ուսումնասիրել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտների ՀՀ պետական քաղաքականության վերաբերյալ շահագրգիռ կողմերի կարծիքներն ու առաջարկությունները, այդ ոլորտների պետական քաղաքականության միջազգային փորձը, կազմակերպել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտների ՀՀ պետական քաղաքականության մշակման և իրականացման հետ կապված հանդիպումներ, քննարկումներ, աշխատաժողովներ.
- նախաձեռնել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության զարգացման, պետական ծրագրերի մշակման, միջազգային փորձի մոտարկման և տեղայնացման, մոնիթորինգի և գնահատման աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու, ուսումնասիրելու աշխատանքներ.
- նախաձեռնել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության հայեցակարգերի, ռազմավարությունների նախագծեր մշակման աշխատանքային խմբերի ձևավորում, տարբեր շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներ, երիտասարդների տարբեր խմբերի հետ քննարկումներ.

- ստանալ տեղեկատվություն պետական ռազմավարական ծրագրերի մշակման և իրականացման, մոնիթորինգի աշխատանքների վերաբերյալ.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն նախարարության ֆինանսավորմամբ երիտասարդական, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններից՝ ծրագրերի իրականացման վերաբերյալ.
- պահանջել համապատասխան կառույցներից անհրաժեշտ տվյալներ և տեղեկատվություն ՀՀ պետական բյուջեի, ինչպես նաև միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագծերի երիտասարդության և լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներին առնչվող ծրագրերի մշակման համար.
- կազմակերպել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ինչպես նաև միջազգային միջգերատեսչական պայմանագրերի մշակմանը մասնակցության հարցերի վերաբերյալ քննարկումներ և հանդիպումներ, նախաձեռնել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառներում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված միջոցառումներ.
- նախաձեռնել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության միջպետական համագործակցության ծրագրեր.
- որպես ՀՀ ներկայացուցիչ հանդես գալ միջազգային երիտասարդական կառույցներում.
- նախաձեռնել հանդիպումներ, քննարկումներ և ուսումնասիրություններ՝ երիտասարդների ներուժի իրացման և զարգացման համար առկա խնդիրների և կարիքների վերհանման, ինչպես նաև այլ երկրներում կիրառվող արդյունավետ գործիքներին և մեխանիզմներին ծանոթանալու նպատակով.
- նախաձեռնել երիտասարդների, երիտասարդական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների զարգացմանը, երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտների քաղաքականությանը, հասարակական կյանքի բոլոր ոլորտների մասնակից դարձնելու միջոցառումներ և ծրագրեր.
- պատրաստել և տարածել նյութեր երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտների ջատագովության համար:

Պարտականությունները

- նախապատրաստել և ներկայացնել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներին առնչվող իրավական ակտերի մշակման անհրաժեշտ հիմնավորումներ, նախապատրաստել իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերալ առաջարկությունները, հավաքել, ամփոփել, վերլուծել դրանց վերաբերյալ առաջարկությունները, ներկայացնել հաստատման /կարծիքի/ .
- նախապատրաստել առաջարկություններ, հիմնավորումներ, իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներում պետական քաղաքականության մշակման և իրականացման համար.
- հավաքել և վերլուծել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության զարգացման պետական ծրագրերի մշակման, միջազգային փորձի մոտարկման և տեղայնացման վերաբերյալ տեղեկատվությունը, կազմել մոնիթորինգի և գնահատման աշխատանքների ծրագիր և կազմակերպել դրա կատարումը.
- հավաքել, ամփոփել և վերլուծել երիտասարդների, լրացուցիչ և շարունակական կրթության կարիքների, խնդիրներ և ակնկալիքների վերաբերյալ տեղեկատվությունը, մշակել և

ներկայացնել երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության հայեցակարգերի, ռազմավարության նախագծերի և դրանց իրականացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ,

- նախապատրաստել և ներկայացնել առաջարկություններ պետական ռազմավարական ծրագրերի, դրանց մշակման, իրականացման և մոնիթորինգի վերաբերյալ.
- կազմել նախարարության ֆինանսավորմամբ երիտասարդական, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերի մոնիթորինգի ժամանակացույց, վերահսկել ծրագրերի իրականացման ընթացքը.
- հավաքել, վերլուծել և ամփոփել ՀՀ պետական և միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագծերի երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներին առնչվող ծրագրերի մշակման համար անհրաժեշտ տվյալներ և տեղեկատվություն.
- նախապատրաստել առաջարկութուններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագծերի երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներին առնչվող ծրագրերի վերաբերյալ,
- ներկայացնել առաջարկություն երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառներում Հայաստանի Հանրապետության միջազգային, միջգերատեսչական պայմանագրերի նախագծերի, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման վերաբերյալ.
- պատշաճորեն ներկայացնել ՀՀ-ը միջազգային երիտասարդական կառույցներում և իրականացնել դրանից բխող աշխատանքները.
- ապահովել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ և մասնակցությունը դրանց աշխատանքներին.
- պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներում իրականացվող միջոցառումների և ծրագրերի վերաբերյալ,
- ամփոփել, վերլուծել երիտասարդների ներուժի իրացման և զարգացման համար առկա խնդիրներն ու կարիքները և նախապատրաստել առաջարկություններ խնդիրների լուծման համար.
- վերլուծել երիտասարդների, երիտասարդական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների զարգացմանը, երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտների քաղաքականությանը, հասարակական կյանքի բոլոր ոլորտների մասնակցության խնդիրները և մշակել միջոցառումներ և ծրագրեր դրանց լուծման համար.
- ներդնել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվություններ (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) և, դրանց միջոցով հավաքված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարել վարչական վիճակագրական ռեգիստրներ.
- ամփոփել վարչության իրավասության ոլորտներին առնչվող ծառայությունների շուկաների վերլուծությունները, ամփոփել և տարածել իրավիճակային տվյալները,
- քննարկել քաղաքացիների նամակների (դիմումներ ու բողոքներ) քննարկումը, նպաստել դրանցում արծարծված հարցերի լուծմանը:
- ուսումնասիրել, վերլուծել և ամփոփել ներկայացված փաստաթղթերի փաթեթները և ներկայացնել առաջարկություններ.
- օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան

վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) և, դրանց միջոցով հավաքված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարել վարչական վիճակագրական ռեգիստրներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1.Կրթություն, որակավորման աստիճանը
Բարձրագույն կրթություն
3.2. Մասնագիտական գիտելիքները
Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ
3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը
Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:
3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ
Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Բանակցությունների վարում
3. Փոփոխությունների կառավարում
4. Կոնֆլիկտների կառավարում
5. Ժամանակի կառավարում
6. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
7. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում

4. Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատաքի կամակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:
4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ
Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:
4.3 Գործունեության ազդեցությունը
Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:
4.4. Շփումներ և ներկայացուցչություն
Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և (կամ) մարմինը:
4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կամ համակարգվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: